

ՕԴՏԱԿԱՄ ԳԻՒՏԵՐ

ՈՇ և էցէ պահուղ պահելու էրու :

ԱԿՆԹ—ՕՊԻՆ անունով Պաղղիացին հնարք մը գտաւ, որով ինչ և իցէ պտուղ ինչուան տարի մը կը դիմանայ : Դատած հնարքը աս է . պահելուզած պտուղիդ ձեռվն ու մեծութեամբը շինէ կաւէ գնտակ մը . աս գնտակը հալած մեղրամոմի մէջ թաթխէ ու թող որ վրան հաստկեկ կծեպի պէս մեղրամոմ կապէ . երբոր աս կծեպը կը չորնայ, գնտակը մէջ տեղէն երկու կտոր ըրէ քիչ մը տաքցուցած դանակով մը : ԱՌԾԻ հողէ կաղպարները գուրս հանէ, ու մնացած մեղրամոմէ կծեպին մէջ դիր ուզած պտուղդ, մէկալ կծեպն ալխուփի պէս վրան յարմարցու ու մեղրամոմվ մէկմէկու կպցու, չոր տեղ մը պահէ, անանկ որ ոչ արեւ տեսնէ և ոչ օդ առնէ : Այսէլու է որ դրած պտուղդ ողջ ըլլայ, ձեռքով սխմուած ըլլայ, ու քիչ մըն ալտհաս ըլլայ :

Խաղողը ինչուան չմեւ պահելու հնարք :

ՊԱՀԵԼ ուզած ողկոյզներդ չոր ու բաց օդի մը ատեն ժողվէ, ու ան հատիկներն որ քիչ մը փտտած են կամ փտտելու վրայ են՝ փրցուր ու նետէ . յետոյ աս ողկոյզները տուփի կամ մնտուկի կամ տակառի մէջ կարգաւշարէ վրայէ վրայ, բայց ամէն մէկ կարգին մէջտեղը մէյմէկ կարգ դեղձի տերև դիր . նմանապէս տակառին տակը՝ վրան ու քովերն ալ դեղձի տերեով պատէ, որ խաղողը փայտին ըլլայի : Այսքը ան մնտուկները չոր ու հովթը փուկ սենեկի մը մէջ դիր ու պահէ . ամէն մէկ տակառին մէջ ինչուան չորս կարգ խաղող կրնաս դնել : Ասանկ դիւրին կերպով Դատալիայի մէջ ինչուան մարտ ու ապրիլ ամիսնե-

րը խաղող կը պահեն . և աս բանս դեղձի տերևներուն մէջի թթուուտին ուժէն առաջ կուգայ :

ԱՌՊԱԴՈՒԵՂԻՆԱՅ Վրայէն եղի բծերը հանելու էրու :

Այս բանիս համար կը գործածուի երկու տեսակ նիւթ, այսինքն ալքոոլ, և ծծմբային եթեր . ասոնք մինակ գործածել ըլլար, վասն զի ալքոոլը այնչափ ուժ չունի որ բիծ հանէ, եթերն ալշատ սուզէ և պահելու ցիգար . որովհետեւ որչափ ալշիշն բերանը ամուր գոցած ըլլաս՝ անիկայ կը ցնդի : Այրբոր աս նիւթերը զատ զատ առնելով՝ մետաքսեղէնդ աճուես, փայլունութիւնը կը կորսընցընէ . իսկ թէ որ մէկտեղ գործածես, խիստ փափուկ գոյներու վրայ ալ կրնաս բանեցընել՝ առանց մետաքսեղէնին փայլունութիր կորսընցընելու . և աս բանս աս կերպով ըրէ : ԱՌԵտաքսեղէնը առ շիտակ սեղանատախտակի մը վրայ տարածէ, ու ալքոոլով աղէկ մը թրծէ բծաւոր տեղուանքը, վրանին ալ բարակ կը տաւ մը դիր ու արդուկ՝ մը զարկ : Այրբոր ան դրած կտաւդ եղոտի՝ փոխէ, ու նորէն վրայէն արդուկով անցիր : Այրբոր բիծը թեթևէ, աս գործողութիւնը բաւական է զանիկայ բոլորովին հանելու . իսկ երբոր աս կերպով բոլորովին չելլեր, ան ատեն բծերուն վրայ քանի մը պուտ ծծրմբային եթեր կաթեցուր ու աճուէ, որով բոլորովին աներեսյթ կ'ըլլան բծերը . թէ որ կ'ուզես՝ քանի մը օրէն ետքը վրան արդուկ մըն ալ զարկ : Ասանկով շատ դիւրաւ կրնաս հանել խիստ ազնիւ մետաքսեղէն կերպամներուն բծերն ալ :

1 Գ. 2. Éther sulfurique.

2 Ի-Բ-Ի-: